# ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2023 թվականի թիվ 32-Ա

ք. Երեւան

## «ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ ***Հանձնաժողով***) ուսումնասիրելով 2023 թվականի ապրիլի 4-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 12 վարչական վարույթի նյութերը՝***պարզեց.***

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ ***Օրենք***) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս, ինչպես նաեւ ղեկավարվելով Օրենքի 49-րդ հոդվածի 5-րդ մասով եւ 60-րդ հոդվածի 8-րդ մասով, 2023 թվականի փետրվարի 2-ին *«Ցանցային օպերատորի գործունեություն իրականացնող ընկերությունների ղեկավարներին»* է հասցեագրել Հանձնաժողովի նախագահի 01-79 գրությունը (այսուհետ՝ ***Գրություն***):

Գրությամբ ցանցային օպերատորի գործունեություն իրականացնող ընկերությունների ղեկավարներից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել վերահաղորդվող տեսալսողական ծրագրի վերաբերյալ հետեւյալ տեղեկությունները.

- ծրագրի անվանումը,
- ծրագրի իրավատիրոջ անվանումը,
- վերահաղորդման իրավունքը հավաստող փաստաթղթերի գործողության ժամկետը,
- ցանցային օպերատորի ծառայությունը, ո՞ր ապրանքային նշան(ներ)ի ներքո է մատուցվում,
- բաժանորդներին ո՞ր ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից է մատուցվում վերահաղորդվող ծառայությունները:

Չնայած Գրությունում հստակ սահմանված էր պատասխան ներկայացնելու ժամկետը՝ *2023 թվականի մարտի 20*, «ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն կամ Ցանցային օպերատոր) Գրությանը պատասխանել է ժամկետանց՝

*2023 թվականի մարտի 30-ին* (նշված գրությունը Հանձնաժողով է մուտքագրվել սույն թվականի ապրիլի 06-ին)*:*

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով, 4-ը ապրիլի 2023 թվականին Ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի եւ վերահսկողության վարչության պետի զեկուցագիրը (այսուհետ՝ ***Զեկուցագիր***)՝ **<u>Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի</u>** պահանջի խախտման փաստի վերաբերյալ:

2023 թվականի ապրիլի 6-ին Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին ծանուցել է Ցանցային օպերատորին եւ հայտնել, որ հարցի վերաբերյալ կարող է ներկայացնել իր պարզաբանումները եւ բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Ցանցային օպերատորը ներկայացրել է հետեւյալ պարզաբանումը.

> *«Հարգելի՛ գործընկեր, ի պատասխան Ձեր գրության հայտնում ենք, որ մարտ ամսվա ընթացքում մեզ պատկանող «**MAIL**» սերվերի հետ կապված ունեցել ենք հաճախակի խափանումներ եւ անսարքություններ, որի պատճառով հնարավոր է Դուք չեք ստացել մեր կողմից՝ մարտի 30-ին ուղարկված հաշվետվությունը: Ուստի կրկին անգամ ուղարկել ենք Ձեզ պահանջվող հաշվետությունը, եւ այս գրությանը կից ֆայլով ուղարկում ենք մարտի 30-ին ուղարկված նույն հաշվետվության էկրանի նկարը (screenshot): Հայցում ենք Ձեր ներողամտությունը եւ խնդրում ենք հաշվի առնելով տեխնիկական խնդիրները ըմբռնումով մոտենալ հարցին: Կանխավ շնորհակալություն:»:*

***Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) եւ եզրահանգումը.***

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության եւ գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետեւյալը.

**<u>Օրենքի 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն.</u>**

«Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ցանցային օպերատորները կարգավորող պետական մարմին տեղեկություն են ներկայացնում իրենց ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին:»:

**<u>Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.</u>**

«Հայաստանի Հանրապետության տարածքում եւ նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:»:

**<u>Օրենքի 49-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն.</u>**

«Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ ցանցային օպերատորը տեղեկացնում է կարգավորող պետական մարմնին:»:

**<u>Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.</u>**

«Կարգավորող պետական մարմինը սույն օրենքով սահմանված սուբյեկտներից, պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից պահանջում և ստանում է անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն»:

Հանձնաժողովն ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերը եւ առաջնորդվելով գործում առկա, ինչպես նաեւ ներկայացված ապացույցներով՝ ամրագրում է, որ Օրենքի 49-րդ հոդվածի 5-րդ մասի եւ 60-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթներով՝ Ցանցային օպերատորի կողմից միայն 2023 թվականի մարտի 30-ին է Հանձնաժողով վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկը:

Հանձնաժողովը, որպես տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող պետական մարմին, Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորություններն իրականացրել է Հանձնաժողովի նախագահի կողմից գրավոր հարցման ձեւաչափով:

Հանձնաժողովը փաստում է նաեւ, որ լիցենզիա ստացած Ցանցային օպերատորը վերահաղորդում է տեսալսողական ծրագրեր եւ պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում օրենքով սահմանված կարգով կրել պատասխանատվություն: Ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հաշվի առնելով այն փաստը, որ Ցանցային օպերատորն իր բացատրությունում որեւէ կերպ չի հերքում իր կողմից դրսեւորած ոչ իրավաչափ վարքագիծն, ավելին, բերում է բացատրություններ առ այն, թե ինչ պատճառով չի կատարել Օրենքով նախատեսված իմպերատիվ պարտավորությունը, ուստի Հանձնաժողովն արձանագրում է, որ օրենքի դրույթները խախտելու դեպքում Ընկերությանը պետք է ենթարկել վարչական պատասխանատվության:

Այսպիսով, ցանցային օպերատորի բացատրությունները հիմնավոր և բավարար հիմք չեն, իրավախախտման փաստը բացառելու, սահմանված իրավախախտումը չարձանագրելու և ցանցային օպերատորի նկատմամբ օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն չկիրառելու համար:

**<u>Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի</u>** համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

**<u>Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի</u>** համաձայն՝ «կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաեւ պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու եւ դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր

տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետեւյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.
2) տուգանք.
3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:»:

**<u>Օրենքի 57-րդ հոդվածի 27-րդ մասի</u>** համաձայն.
«Կարգավորող պետական մարմնի որոշմամբ կամ նախագահի գրությամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացնելը կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով»:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 49-րդ հոդվածի 1-ին եւ 5-րդ մասերով, 60-րդ հոդվածի 8-րդ մասով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Օրենքի 57-րդ հոդվածի 27-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. «ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 57-րդ հոդվածի 27-րդ մասով սահմանված վարչական տույժը՝ տուգանելով սահմանված 500000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՎԻՐՈՒՍ ՆԵՏ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձեւով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ**
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ** **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

26 ապրիլի 2023թ.
ք. Երեւան